ԿՈՒԵՆԻ ԾԱՌՆ

Կուենի կամ ռետնի (pinus larix) ծառն սովորաբար 60էն մինչև 100 ոտնաչափ բարձրութիւն կ'ունենայ, և 3–4 ոտնաչափ տրամագիծ։ Արմատն՝ շատ խոր կ'երթայ. բունն՝ ուղիղ է և կոնաձև. կեղևն՝ նախ ողորկ և սեագորշ, որ ապա ժամանակաւ կը կարմրագունի. ճիւղերն՝ աստիճանաբար բարձրանալով կամ երկննալով, բրգաձև գագաթ մը կը կազմեն (Զև 1). տերևներն կակուղ, նուրբ և նեղ են, և շատ չեն դիմանար՝ կը թօթափին։ — Այս ծառս շատ առատ կը գտնուի Ալպեանց և Եւրոպայի բարձր լերանց վրայ և հարաւային Ասիոյ մէջ։ Կուենին ամենէն աւելի օգտակար ծառերէն մին է.

Զև 1. Կուենի.

digitised by A.R.A.R.@

անոր փայտն՝ իւր մէջ խէժ կամ ռետին բովանդակելով՝ երկար ա-
տեն կը դիմանայ օդուն և խոնաւութեան ազդեցութեանց. սովորա-
բար շէնքերու համար կը գործածուի, մանաւանդ ջրոյ տակ եղած
շինուածոց, քարանալով ջրոյն ազդեցութենէն։ Այս փայտս ընկու-
զենւոյ փայտէն աւելի գերադաս կը համարուի, թէ իր թեթևու-
թեամբ և թէ տոկունութեամբ. ուստի և շատ կը գործածուի տանիք-
ներ շինելու և նաւակազմութեան մէջ։

Այս փայտով շինուած տախտակք, սեղանք, և կահկարասիք ա-
մենէն աւելի ընտիրք են. եղևնափայտէն աւելի լաւ այրելու կը ծա-
ռայէ, և անոր ածուխն յաճախ դարբնոցներու մէջ կը գործածուի։



Գէ. 2. Պտուղն կուենւոյ

Մատղաշ կուենեաց կեղևն կը գործածուի սեագորշ գոյն մը շինելու,
և տեղ տեղ մանրելով զայն 'ի փոշի՝ մորթերը ողորկելու և փայլեցը-
նելու կը ծառայեցնեն։ Դարձեալ այս ծառէս խիժային նիւթ մը կը ժող-
վեն, որ արուեստից մէջ՝ մանաւանդ 'ի բժշկութեան շատ օգտակար
կըլլայ, և կը կոչուի վենետկական ռետին (Trementina di Venezia).
այս նիւթս ինքիրեն դուրս կու գայ ծառին կեղևէն, կը սկսի Մայիս
ամսուն մինչև 'ի Սեպտեմբեր ամիսն։ Դարձեալ դիտելու է, որ Յունի-
նիս և Յուլիս ամսոց մէջ կուենւոյ տերևքն անոյշ հիւթ մը կը ծո-
րեն, որ կը թանձրանայ ապա սպիտակ գնդակիկներու ձևով, և
մաքրողական զօրութիւն ունի նման հացենւոյ մանանային, և կը կոչուի
մանանա Գրիանզոնի։

digitised by A.R.A.R.@